



**ԱՊՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**  
Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական  
պարբերական

**ISSN 2579-2822**



Կայքէջ՝ [anau.am/scientific-journal](http://anau.am/scientific-journal)

doi: [10.52276/25792822-2022.3-300](https://doi.org/10.52276/25792822-2022.3-300)

ՀՏԴ 636.4:619:616.985:579.841.94

## ԽՈՉԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ԱՏՐՈՖԻԿ ՌԻՆԻՏ ՀԻՎԱՆՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՅ ՈՐՈՇ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Ա.Ռ. Հակոբյան ա.գ.թ.**

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

[akobian.anush@yandex.ru](mailto:akobian.anush@yandex.ru)

### Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Մ

#### Բանալի բառեր՝

վարակիչ ատրոֆիկ ռինիտ, քթախեցիկների հետաճ, գանգի դիմային մասի ոսկորների ձևափոխություն, խոզաբուժական տնտեսություն, *Bordetella bronchiseptica*, դերմոնեկրոտոքսին

### Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Խոզերի ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է ՀՀ Արմավիրի և Կոտայքի մարզերի որոշ խոզաբուժական տնտեսություններում: Հետազոտությունների համաձայն՝ հիվանդության նկատմամբ ընկալունակ են բոլոր ցեղատեսակների և սեռատարիքային խմբերի խոզերը, սակայն բնորոշ կլինիկական ախտանշանները դրսևորվում են 3-5 ամսական բուման մատղաշի մոտ:

Հայաստանում հիվանդության տարածմանը նպաստում են խոզաբուժական տնտեսությունների միջև տնտեսական կապերը: Անապահով խոզաբուժական տնտեսությունների առողջացումը, ինչպես նաև հարուցիչի հետագա տարածումը կանխող միջոցառումները իրականացվել են հիվանդության կանխարգելման և պայթարի միջոցառումների հրահանգի համաձայն: Բուժման նպատակով կիրառվել է Սուլֆապիրիմ 48-ԲՏ պատրաստուկը:

### Նախաբան

Վերջին տարիներին խոզաբուժական տնտեսություններում տարածված հիվանդություններից առանձնակի ուշադրություն է դարձվում վիրուսային հիվանդություններին՝ աֆրիկյան և դասական ժանտախտերին: Վերջիններս այսօր էլ համաճարակավտանգ են և սեմինարների, կոնֆերանսների, գիտաժողովների, գիտական հրապարակումների քննարկման առարկան են: Հարկ է նշել, որ մանրէական ծագման մի շարք վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքում զգալիորեն նվազում է խոզաբուժության շահութաբերությունը:

Հայաստանում անասնապահական տնտեսությունների մասնավորեցմամբ, ինչպես նաև դրանցում անասնաբուժական ծառայության իսպառ բացակայությամբ պայմա-

նավորված՝ մի շարք հիվանդություններ ոչ միայն պաշտոնապես չեն արձանագրվում, այլև չեն ախտորոշվում: Այդ հիվանդությունների շարքին է դասվում խոզերի վարակիչ ատրոֆիկ ռինիտը, որը շնչառական ուղիների քրոնիկ ընթացքով հիվանդություն է, բնորոշվում է լորձաթաղանթների շճաթարախային բորբոքումով, քթախեցիկների հետաճով և գանգի դիմային մասի ոսկորների ձևափոխությամբ:

Խոզերի վարակիչ ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է Արմավիրի և Կոտայքի մարզերի որոշ խոզաբուժական տնտեսություններում: Հիվանդության հետևանքով առաջացած անկումները մեծաթիվ չեն (7-10 %), սակայն հիվանդ խոզերի աճը կերակրման միևնույն պայմաններում դանդաղում է. 6-8 ամսականում քաշաճը կազմում է 60-70 %, ինչը տնտեսական վնաս է հասցնում

տնտեսությանը: Պայթարի միջոցառումների բացակայության դեպքում համաճարակը տնտեսություններում կարող է շարունակվել մի քանի տարի (H.H. Алтыхов, 1990, И.А. Бакулов, 1987, Б.Ф. Бессарабов и др., 2007):

Չարկ է նշել, որ նախատրամադրող գործոնների առկայությունը և խոզաբուժական տնտեսությունների միջև տնտեսական կապերը նպաստում են հիվանդության տարածմանը: Ուստի խնդիր է դրվել Էջմիածնի տարածաշրջանի որոշ խոզաբուժական տնտեսություններում իրականացվող հետազոտությունների միջոցով ուսումնասիրել և պարզել ատրոֆիկ ռինիտի առաջացման պատճառներն ու տարածվածությունը:

**Նյութը և մեթոդները**

Չետազոտություններն իրականացվել են 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի և Կոտայքի մարզի մասնավոր խոզաբուժական տնտեսություններն ունեն մային ուղղվածություն, զբաղվում են լանդրաս, դյուրոկ, կարմալ, պետրեն և այլ ցեղատեսակների տարբեր սեռատարիքային խմբերի 400-500 գլուխ խոզերի բուծմամբ, երբեմն էլ՝ տոհմային նշանակության կենդանիների վաճառքով: Սերմավորումը կատարվում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական եղանակով: Ճնից առաջ հղի խոզամայրերով մայրանոցի համալրումն իրականացվում է երեք օրվա ընթացքում:

Չետազոտությունների ընթացքում մայրանոցի յուրաքանչյուր սեկտորում տեղաբաշխվել է 20 խոզամայր: Մայրերից խոճկորների անջատումը նախատեսվել է միջինը կյանքի 30-րդ օրը: Ի տարբերություն մայրերից անջատված խոճկորների և բտման ենթակա մատղաշի պահվածքի պայմանների՝ խոզամայրերի համար նախատեսված տարածքները գտնվել են բավականին լավ սանիտարական վիճակում: Փոքր տարածքներում մեծ գլխաքանակի դեպքում նկատվել է սանիտարական վիճակի վատթարացում: Գրանցվել է միևնույն սեռատարիքային խմբի խոճկորների կենդանի զանգվածի բավական մեծ տարբերություն, որոշ դեպքերում անգամ ծայրահեղ հյուժվածություն:

Տնտեսություններում իրականացվել են կարմրախտի, խոզերի դասական ժանտախտի, կոլիբակտերիոզի, պաստերելյոզի, սալմոնելյոզի, դիպլոկոկային սեպտիցեմիայի, լեպտոսպիրոզի դեմ պատվաստումներ:

Լաբորատոր հետազոտությունները կատարվել են ՉԱԱՀ Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնում: Չետազոտության են ենթարկվել ատրոֆիկ ռինիտին բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ խոզերը: Կիրառվել են հետազոտության համաճարակաբանական, կլինիկական, ախտաբանաանատոմիական և լաբորատոր եղանակներ: Լաբորատոր ախտորոշման համար ախտաբանական նյութ է ծառայել բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ 25 գլուխ խոզերի քթի խոռոչի պարունակյալը, որից անմիջապես անասնաշենքի պայմաններում

պատրաստվել են քուլթեր: Էջմիածնի տարածաշրջանի, ինչպես նաև Կոտայքի մարզի խոզաբուժական տնտեսություններից ախտաբանական նյութը նմուշառվել է ըստ սեռատարիքային խմբերի՝ խոզամայրեր, ծծկեր խոճկորներ և 100-150 օրական բտման մատղաշ: Յուրաքանչյուր խմբից վերցվել է 3-5 նմուշ: Ընդհանուր ախտաբանական նյութը կազմել է 50 նմուշ: Մանրէաբանական հետազոտության նպատակով բամբակե խնուծներով վերցված ախտաբանական նյութը պահածոյացվել է մանրէազերծ ֆիզիոլոգիական լուծույթում: Չետազոտություններն իրականացվել են ընդունված մանրէաբանական եղանակներով, կիրառվել են համապատասխան միջավայրեր և ռեակտիվներ: Ախտաբանական նյութից ցանքս է կատարվել սովորական սննդային միջավայրերում՝ ՄՊԲ և ՄՊԱ (pH=7,2): ՄՊԲ-ում 48-ժամյա աճեցվածքային պայմաններում հիվանդության հարուցիչն առաջացրել է միջավայրի հավասարաչափ պղտորություն, որից հետո փորձանոթի հատակին զոյացել է նստվածք, և ձևավորվել է ներպատային օղակ: ՄՊԱ-ում նույն ժամանակամիջոցում առաջացել են 2-3 մմ տրամագծով փայլուն, սպիտակամոխրավուն, աննշան արտափսված գաղութներ: Ինչպես ախտաբանական նյութից, այնպես էլ մաքուր աճեցվածքներից պատրաստված քուլթերը ներկվել են ըստ Գրամի (А.Ф. Кузнецов, 2002, А.С. Лабинская, 2010, Б.Ф. Шлыряк, 2001):

*Bordetella bronchiseptica* հարուցիչը 1,5-2x0,4-0,5 մկմ մեծությամբ, մեկական կամ զույգերով, հազվադեպ շղթայաձև դասավորությամբ, անշարժ, գրամ-բացասական, սպոր և պատիճ չառաջացնող օվալաձև մանրէ է: Ունի բարդ հակածնային կազմություն. ներառում է *O* ջերմակայուն, *K* և *H* ջերմասնկայուն հակածինները: *O1* և *K1* հակածիններն ընդհանուր են հարուցիչ բոլոր տարատեսակների համար: Մանրէի ախտածնային հատկությունները պայմանավորված են մաշկը մեռուկացնող արտա- և ներթույլների ազդեցությամբ, ինչպես նաև լիպոպոլիսախարիդային համալիրով: *K* հակածինը շնչառական ուղիների լորձաթաղանթների նկատմամբ ցուցաբերում է կաչողական հատկություն:

*Bordetella bronchiseptica* հարուցիչը (նկ. 1) հետազոտված նմուշներից միայն 20-ում է հայտնաբերվել (И.А. Бакулов, 1987, В.Г. Владимиров и др., 1999, Д.И. Скородумов и др., 1999):

Բուժման նպատակով կիրառվել են Սուլֆապրիմ 48 ԲՏ պատրաստուկը և *A, D* վիտամիններ (Ներմկանային), ինչպես նաև կատարվել է խոճկորների քթի խոռոչի լվացում դոքսիցիլինի կախուկով:

Տնտեսությունում իրականացված բուժկանխարգելիչ միջոցառումների արդյունքում սպանդի է ենթարկվել 91 գլուխ կենդանի:

**Արդյունքները և վերլուծությունը**

2021 թ. Արմավիրի մարզի խոզաբուժական տնտեսությունում իրականացված կլինիկական հետազոտությամբ

հայտնաբերվել են ատրոֆիկ ռինիտին բնորոշ կլինիկական ախտանիշներով կենդանիներ: 2-3 շաբաթական ծծկեր խոճկորների մոտ նկատվել են անհանգստություն, ախորժակի անկում: Հիվանդ խոճկորները փռչում էին, փնչացնում, դուռնը բռնում կերամաններին և պատերին: Որոշ կենդանիների մոտ նաև նկատվել է փորլուծություն. կղանքը դեղնամոխրավուն էր, առանց նեխային հոտի (В.Г. Гавриш, 2003, П.П. Достоевский и др., 1990, П.П. Достоевский, П.И. Вербицкий, 2004, А.А. Кузнецова и др., 2019):

Բուման ենթակա մատղաշ կենդանիների մի մասի մոտ քթի խոռոչից հոտում էր շճային, իսկ մյուս մասի մոտ՝ շճաթարախային էքսուդատ, առկա էր արյունահոսություն: Գլխի դիմային մասի միակողմանի ձևախախտման և անկանոն ատամնաստվածքի հետևանքով վերին ծնոտը ծաված էր աջ կամ ձախ: Վերին և ստորին ծնոտների երկարությունների տարբերությունը կազմում էր մոտ 1-3 սմ, անգամ ծնոտների փակված վիճակում որոշ չափով տեսանելի էր լեզուն (սկ. 2): Հիվանդ խոճկորների մեծ մասի մոտ քթի մաշկը դեղին հետին հատվածում ծալքավորված էր, քիթը՝ վեր ցցված (մոպասման), ինչը հիմնականում քթի խոռոչների երկկողմանի ախտահարման հետևանք է (սկ. 3):

Հարկ է նշել, որ ախտաբանաանատոմիական փոփոխությունների առաջացումը և համապատասխան կլինիկական ախտանիշների դրսևորումը պայմանավորված են հիվանդության հարուցիչ կողմից արտադրվող թույլի՝ դերմոնեկրոտոքսինի ազդեցությամբ:

Միաժամանակ կերի ընդունման ֆունկցիայի խանգարման հետևանքով դանդաղել է խոճկորների աճը և զարգացումը: Միևնույն սեռատարիքային խմբի բուման մատղաշի կենդանի զանգվածի առավելագույն տարբերությունը կազմել է 25 կգ: 3-5 ամսական մատղաշի 20 %-ի մոտ նկատվել է կոպերի այտուցվածություն, արցունքափոսություն, աչքերի շուրջը, հատկապես ստորին հատվածներում՝ մուգ բծեր (И.И. Лукашов, 1954, В.А. Пиотрович, 2012, П.И. Пritулин, 1970, Р.Ф. Сосов, 1974):

Ըստ համաճարակաբանական հետազոտությունների՝ տևտեսությունում հիվանդության առաջին դեպքերը գրանցվել են Կոտայքի մարզի մասնավոր խոզաբուծական տնտեսություններից մեկից հղի խոզամայրեր ներմու-

ծելուց հետո: Զանի որ խոզերի ատրոֆիկ ռինիտը քրոնիկ ընթացքով, դանդաղ զարգացող հիվանդություն է, ուստի բնորոշ կլինիկական ախտանիշները կենդանիների մոտ ի հայտ են եկել 7-8 ամիս անց:

Տնտեսությունում կարանտինային բաժանմունքի բացակայության պատճառով տոր ներմուծված հղի խոզամայրերն անմիջապես խառնվել են ընդհանուր գլխաբանակին: Լինելով մանրեակիր՝ ներմուծված կենդանիները նպաստել են հիվանդության առաջացմանը և հետագա տարածմանը:


Սպանդի ենթարկված կենդանիների մոտ հիվանդության քրոնիկ ընթացքի հետևանքով առկա են եղել քթի ոսկորների ծավածություն, վերին ծնոտի բարակավուն ոսկորներ, քթի միջնապատի և խեցիների լորձաթաղանթների ախտահարում, որոշ դեպքերում՝ թոքերի կատարային բորբոքումից ընդհուպ մինչև թարախային բորբոքում (սկ. 4) (О.В. Якушева, 1964):

Ատրոֆիկ ռինիտի նկատմամբ անապահով խոզաբուծական տնտեսությունների առողջացումն իրականացվում է երկու հիմնական եղանակով:

Առաջին եղանակի դեպքում անապահով տնտեսության ամբողջ գլխաբանակը ենթարկվում է հարկադիր սպանդի, եթե հիվանդությունը կրում է զանգվածային բնույթ՝ ընդգրկելով գլխաբանակի ավելի քան 50 %-ը: Վարակագրծման միջոցառումներ են իրականացվում ինչպես տնտեսության ներսում, այնպես էլ հարակից տարածքում, որից հետո տնտեսությունը համալրվում է առողջ գլխաբանակով:

Երկրորդ եղանակի դեպքում անապահով տնտեսության խոզերը բաժանվում են երեք խմբի: Առաջին խմբում ներառվում են ակնհայտ կլինիկական ախտանիշներով հիվանդ կենդանիները, այդ թվում՝ վարակակիր խոզամայրերն իրենց խոճկորներով: Լյդ կենդանիները մեկուսացվում են ընդհանուր գլխաբանակից և ենթարկվում սպանդի կամ բուժվում են՝ հետագայում սպանդի հանձնելու նպատակով:

Երկրորդ խմբում ընդգրկված պայմանական առողջ կենդանիները հիվանդության վաղ ախտորոշման նպատակով 5-6 օր ընդմիջումով ենթարկվում են կլինիկական զննման, հատկապես ուշադրություն է դարձվում ծնոտների զարգացմանը: Հիվանդները մեկուսացվում են, ենթարկվում սպանդի կամ բուժվում:




**Սկ. 1.** Մանրաբանական հետազոտությամբ հայտնաբերված *Bordetella bronchiseptica* հարուցիչը:



**Սկ. 2.** Գլխի դիմային մասի միակողմանի ձևախախտումով խոճկոր:



**Սկ. 3.** Վեր ցցված (մոպասման) քթով խոճկոր:



**Սկ. 4.** Հիվանդության քրոնիկ ընթացքի հետևանքով ախտահարված թոքեր:

Երրորդ խմբում ներառվում են առողջ կենդանիները, որոնց վարակումից պաշտպանելու համար անցկացվում են համապատասխան միջոցառումներ:

Տնտեսությունը համարվում է առողջացած, եթե մեկ տարվա ընթացքում իրականացված եռակի մանրէաբանական հետազոտության արդյունքները բացասական են, չեն հայտնաբերվել հիվանդության դեպքեր, և խոզամայրերից երկու ծնի ընթացքում ստացվել են առողջ խոնկորներ (Ս.Լ. Գրիգորյան, 2002, А.А. Кузнецова и др., 2019, П.И. Притулин, 1970, Р.Ф. Сосов, 1974):

Տնտեսության առողջացումը մեր կողմից իրականացվել է երկրորդ եղանակով:

Բնորոշ կլինիկական ախտանիշներով հիվանդ կենդանիները մեկուսացվել են և ենթարկվել սպանդի: Խոզամայրերն իրենց ծծկեր խոնկորներով առանձնացվել են, իսկ մյուս սեռատարիքային խմբի կենդանիները մեկուսացվել են և հետագայում սպանդի հանձնելու նպատակով բուժվել: Հաշվի առնելով, որ հիվանդության հարուցիչը գրամ-բացասական է, կիրառվել է Սուլֆապրիմ 48 ԲՏ պատրաստուկը՝ օրը երկու անգամ, 12 ժամ ընդմիջումով, կերի հետ խառնած վիճակում 0,04 գ/կգ կենդանի զանգվածի հաշվով: Բուժման տևողությունը կազմել է հինգ օր: Խոնկորներին երկու օրը մեկ անգամ ներարկվել են *A* և *D* վիտամիններ՝ ներմկանային, 100 ԱՄ/կգ զանգվածի հաշվով: Բացի այդ՝ խոնկորների բթի խոռոչը լվացվել է դոքսիցիկլինի կախուկով (1 գ դոքսիցիկլինը խառնվել է 30-35 գ 20 %-անոց գլիցերինի ջրային լուծույթին):

Տնտեսության ողջ գլխաբանակը տեղափոխվել է ամառային ճամբարային պահվածքի: Անասնաշենքում կատարվել են մեխանիկական մաքրման, 2 %-անոց կծու նատրիումի լուծույթով ախտահանության, ինչպես նաև կրծողների ոչնչացման (դերատիգազիա) և միջատազերծման (դեզինսեկցիա) աշխատանքներ:

### Եզրակացություն

Համաճարակաբանական, կլինիկական, ախտաբանաանատոմիական և լաբորատոր հետազոտությունների համաձայն՝ խոզերի ատրոֆիկ ռինիտը ներկայումս տարածված է Հայաստանի որոշ խոզաբուծական տնտեսություններում: Հիվանդության առաջացմանը նպաստել են տնտեսությունների սանիտարական վատ պայմանները, կենդանիների ոչ լիարժեք կերակրումը, խիտ պահվածքը, տեղափոխումների հետևանքով առաջացած սթրեսները, կերատեսակներում հանքային նյութերի՝ առաջին հերթին կրածին և ֆոսֆորական աղերի, *A* և *D* վիտամինների անբավարար քանակությունը և այլ գործոններ:

Հիվանդության նկատմամբ ընկալունակ են բոլոր սեռատարիքային խմբերի կենդանիները, սակայն առավել հաճախ հիվանդանում է մատղաշը: Լիատարիք կենդանիները հիմնականում մանրէակիր են:

Հայաստանում հիվանդության տարածմանը նպաստել են

խոզաբուծական տնտեսությունների միջև տնտեսական կապերը, փոխադրամիջոցների ընդհանուր օգտագործումը, հիվանդության նկատմամբ անապահով տնտեսություններից հիվանդ, հիվանդության գաղտնի շրջանում գտնվող, ինչպես նաև մանրէակիր կենդանիների ներմուծումը, նոր ներմուծված կենդանիների համար կարանտինային բաժանմունքի բացակայությունը, տնտեսությունում կենդանիների ոչ ճիշտ վերախմբավորումը և այլն:

Անապահով խոզաբուծական տնտեսությունների առողջացումը, ինչպես նաև հարուցիչ հետագա տարածումը կանխող միջոցառումները իրականացվել են հիվանդության կանխարգելման և պայքարի միջոցառումների հրահանգի համաձայն (В.П. Шишков, 2020): Բուժման նպատակով կիրառվել է Սուլֆապրիմ 48-ԲՏ պատրաստուկը: Խոնկորների բթի խոռոչը լվացումը կատարվել է դոքսիցիկլինի կախուկով:

### Գրականություն

1. Գրիգորյան Ս.Լ. Գյուղատնտեսական կենդանիների համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ. - Եր.: Աստղիկ, 2002. - 641 էջ:
2. Алтухов Н.Н. Краткий справочник ветеринарного врача. - М.: Агропромиздат, 1990. - 574 с.
3. Бакулов И.А. Эпизоотология с микробиологией. - М.: Агропромиздат, 1987. - 247 с.
4. Бессарабов Б.Ф. и др. Инфекционные болезни животных / Под ред. А.А. Сидорчука. - М.: Колос, 2007. - 671 с.
5. Владимиров В.Г. и др. Медицинские лабораторные технологии. - Т. 2. - СПб.: Интермедика, 1999. - 285 с.
6. Гавриш В.Г. Справочник ветеринарного врача. - 4 изд. - Ростов-на-Дону: Феникс, 2003. - 576 с.
7. Достоевский П.П. и др. Справочник ветеринарного врача. - К.: Урожай, 1990. - 784 с.
8. Кузнецова А.А. и др. Атрофический ринит в свиноводстве / А.А. Кузнецова, В.В. Яценюк, Т.И. Лоренгель. - Текст: непосредственный // Молодой ученый. - 2019. - N 5 (243). - 80 с.
9. Кузнецов А.Ф. Справочник ветеринарного врача. - М.: Лань, 2002. - С. 896.
10. Лабинская А.С. Микробиология с техникой микробиологических исследований. - М.: Медицина. 2010. - 479 с.
11. Лукашов И.И. Эпизоотология и клиника инфекционного атрофического ринита у поросят // Ветеринария. - 1954. - N 4. - С. 32.
12. Пиотрович В.А. Инфекционный атрофический ринит свиней // Прибыльное свиноводство. - 2012. - N 4 (10). - С. 28-30.

13. Притулин П.И. Инфекционный атрофический ринит, в кн.: Болезни свиней (сост. Ф.М. Орлов). - 3 изд. - М., 1970. - 207 с.
14. Сосов Р.Ф. Инфекционный атрофический ринит, в кн.: Эпизоотология. - 2 изд. - М., 1974. - 120 с.
15. Скородумов Д.И. и др. Микробиологическая диагностика бактериальных болезней животных. - М.: Изограф, 1999. - С. 23.
16. Шишков В.П. Основы ветеринарного законодательства. - Т. 4. - Болезни свиней. - Ставрополь, 2020. - 312 с.
17. Шуляк Б.ф. Грамотрицательные бактерии. - М.: Олита, 2001. - 45 с.
18. Якушева О.В. Патологоанатомические изменения при инфекционном атрофическом рините у естественно больных и экспериментально зараженных поросят: автореф. дисс. канд. вет. наук. - М., 1964. - 39 с.
19. Достоевский П.П., Вербицкий П.И. Довідник лікаря ветеринарної медицини. - К.: Урожай, 2004. - 1280 с.

## Распространенность инфекционного атрофического ринита свиней в некоторых регионах РА и меры борьбы с ним

**А.Р. Акопян**

*Национальный аграрный университет Армении*

**Ключевые слова:** *инфекционный атрофический ринит, атрофия носовых раковин, деформация костей лицевой части черепа, свиноводческое хозяйство, Bordetella bronchiseptica, дермонекротоксин*

**Аннотация.** Атрофический ринит свиней в настоящее время широко распространен в некоторых свиноводческих хозяйствах Армавирской и Котайкской областей РА. Согласно исследованиям, к заболеванию восприимчивы свиньи всех пород и половозрастных групп, но типичные клинические симптомы проявляются у подсвинков на 3-5-месячном откорме.

Распространению болезни в Армении способствуют экономические связи между свиноводческими фермами. Оздоровление неблагополучных свиноводческих хозяйств, а также мероприятия по предотвращению дальнейшего распространения возбудителя заболевания проводились согласно директиве о мерах профилактики и борьбы с болезнями. Для лечения использовали препарат "Сульфаприм 48-БТ".

## Prevalence of Swine Atrophic Rhinitis in Some Regions of Armenia and its Control Measures

**A.R. Hakobyan**

*Armenian National Agrarian University*

**Keywords:** *infectious atrophic rhinitis, turbinate atrophy, deformation in the bones of skull facial part, pig breeding, Bordetella bronchiseptica, dermonecrotxin*

**Abstract.** Currently, the atrophic rhinitis of pigs is registered in some pig breeding farms of the Armavir and Kotayk regions. According to investigations swines of all breed and sex-age groups are susceptible to the disease but the inherent symptoms are manifested in the 3-5-month-old fattened gilts.

In Armenia the spread of the mentioned disease is promoted by the disposing factors and economic relationships between pig breeding farms. Rehabilitation of insecure pig breeding farms, as well as measures to prevent the further spread of the pathogen, were carried out in accordance with the directive on measures for the prevention and control of diseases. Sulfaprim 48-BT preparation was used for treatment.

*Ընդունվել է՝ 24.06.2022 թ.  
Գրախոսվել է՝ 03.08.2022 թ.*